

նունն ալ, իր փառքն ալ, քաշուեցաւ
Հայաստանի ամենէն անծանօթ կողմը,
և լերանց ու քարայրից մէջ սաղմոսնե-
րով և երգերով իր մեծ ու ընդարձակ
սիրտը կը հանգչեցընէր :

(ԳԻՏԻ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Օրհնեցէք քառանք երկնից .

ՍԵՂՄ .

Ղրուողեցէք թընեկիկք ,
Ինուութեան զարդք եւ ժրպիտք .
Ղրուողեցէք . ձեր անուշ
Երգոց մընան՝ սիրտք եւ յուշ :
Պարուն՝ փողոց ձեր նոր շունչ ,
Հովիտք դիպան վայրս ի հունչ ,
Եւ ծառք ձօնեն զոստ նորեկ
Ի թառս ոտից ձեր եւ յերդ .
Օ եփիւռք ի բոյն ձեր յաւեր
յամանեցին ի հրաւեր .
Ղրուողեցէք թընեկիկք ,
Ինուութեան խաղք գեղեցիկ :
Օ ինչո՞ւ անոյ՞ մինչ փափկիկ
Ընձակ ի կուրծքս թուցիկ
Յուլանցդ ի ձօճ մանրապէս
Ինչ մեր լարից գայք ի վէս .
Որ լըռութիւն յընդհատիկ
Հիւսեալ փափուկ դայլայլիկ
Իբր ոգեշունչ ի պատկեր
Սըշուէք երանգ ընդ ըստուեր ,
Ո՛վ ինքնարուեստ երգեցիկք
Ինուութեան գեղոյ , թընեկիկք :
Թեթեւընթացդ ի փետուր
Ղուք բեռն էք դուք ինչքդ հանուր .
Սանունք ի ձեւ , անսահման
Ունիք զօրոց օթարան ,
Եւ ըզտերեւս ի դահոյս
Եւ զցօղաթուրմ ծաղկանց բոյս .
Ձեւք մարդք պանծան ի մայիս ,
Ղուք ոգետուր յամայիս .
Յոր ոչ այցէք դուք պարտէզ
Ինկենդան իմն է երէզ .

Եւ նո՞՞ք զսրգոյն մերկէ կերպ
Թէ ի նորուն բունիք ծերպ ,
Ղրուողեցէք ինչո՞ւ դամիտ
Ո՛վ բնութեան խաղք եւ ժրպիտ :
Ո՛րմընջեցէք սիրասուն
Վաղցր ընդ խոխոջ ջուրց սահուն ,
Ո՛րմընջեցէք ընդ զեփիւռ
Ո՛րնչ սաւառնէ թեւս ի սփիւռ ,
Օ փածաւալ՝ դ արշալոյս
Ո՛ր արդապրսակ եւ ի լոյս ,
Ինչ առագաստ ծրփծրփին
Ի զգոգ առեալ առ ափին .
Եւ ընդ ծառոց սաղարթուն
Տերեւաշարժ սօսափին ,
Սանրիկ ընդ ցօղ շառաչուկ
Ո՛ր արդին ի թերթսրն փափուկ ,
Ղրուողեցէք անուշիկ ,
() ն քաղցր է ձեր դայլայլիկ :
Կանխայարոյց ի մըրմունջ՝
Ուսոյն էք դուք ընկալուչ .
Ի ձեր բարբառ նախընծայ
Ինուութիւն օրհնէ եւ ցընծայ .
Սըւազեցէք , քաղցր է ձեր
Ղաշնակ ի սիրտ կարեւր ,
Ում ի վշտաց երթեւեկ
Տարբերին միտքն անուրեք .
Որոյ աչաց վարագոյր
Կալեալ հանդէպ անպարոյր ,
Ում բնութիւն սեւալ է պաստառ
Ու ի լոյս՝ յածի՝ մութ խաւար .
Ձեր յանմեղուկ Ղրուողիւն
Խառնի նորուն հեծութիւն ,
Իբր ընդ ըստեղըն խընկոց
Ողջակիզին ծուխ եւ բոց
Որոտացեալ յեզր ամբոց : —
Ի ձեր դայլայլիկ
Իբրու յանոյշ սիկ
Խոնարհեալ ծաղիկ՝
Ի զմայլմ քաղցրիկ ,
Օ երդ առ վըտակին
Ո՛րմունջ ցաւագին ,
Եւ գեղեցկաթոյր
Ո՛ր արդենեաց ի բոյր .
Ինչ հովանեալ կացեալ ծառոյս՝
Փախըստական ձայնքդ յելեւէջ ի
{ թերթս հոգւոյս
Նաւալին զերդ շաղ
Սանր ի շամանդաղ

Շուշանին ի գիրկ
 Յօղեալ անուշիկ,
 Օ որ շիթ առ շիթ թափէ այգուն,
 Լալ յիշատակն եւ քաղցրութիւն են
 {մընայուն : —
 Լըդեօք ի սփիւռքս բընութեան
 Բզձից իցէք դուք թարգման .
 Եթէ ի ձեր դաշնակ անմեղ
 Սերառնու Տէր ի բնութենէ զձեռն
 {իւր ահեղ,
 Յարսիւոյն օթոց մինչ լուսալիւր
 Գայ ի վանել այգուն զերկիր .
 Թէ ըզկարիս տիեզերաց
 Պա առաւօտինըս ըզերձէք ձայն մաղ
 {թանայ,
 ()ն փոյթ յաղերս, թըռչնեկիկք,
 Եւ փափկագոյն մընջեսջիք .
 Տէր, դու նիրհելոյն,
 Տացես արթնութիւն .
 Եկանն արեւու
 Բզող լուսատու,
 Եւ ընդ ամէն բիբ
 Հար ըզնորուն տիպ .
 Տուր 'հանուրց հազագ
 Բարբառ ներդաշնակ,
 Օ անգակին ըզգանգ,
 Յանձաւս արձագանգ,
 Ստոց շըշընջիւն,
 Եւ հողմոց հընչիւն .
 Գետոց տուր հոսանս,
 Ծովուն ըզբօսանս,
 Յառագաստն հողմիկ,
 Եւ ցանցին որսիկ :
 Ենդաստանաց տուր
 Եւ խաշին ըզջուր,
 Սի պերճ սահանաց
 Դիցես ըսպառուած .
 Ծառոյն տուր սաղարթ
 Եւ բուրումն ի վարդ,
 Թայր ի մանուշակ
 Եւ ջուր անուշակ .
 Յորենին ըզքիստ
 Եւ բըրլոց ըզնիստ,
 Ծըմակին ըստուեր
 Եւ բոց ի լսպտեր :
 Սի թողուր ըզբոյն
 Ենձայն ընդ այգուն,
 Հիւղին՝ հանգոյն տան

Լըկ հիմն անտատան .
 Տուր եւ առ մանկիկ
 Շիչ, նինջ անուշիկ .
 Եւ ի ստինս անդ մօր
 Կաթըն մեղրածոր :
 Տուր, Տէր . . . այլ ո՛հ թըռչնեկիկք,
 Սի եւ զայս գողտր ի դայլայլիկ . . .
 Թողէք զի սիրտ հեծէ այժմիկ .
 Տուր Տէր եւ որբոյն
 Օ ըսփոփանս այգոյն,
 Տուր արտօսը աչաց
 Վնացս՝ սրտին առուաց .
 Տուր թեւս ի նորուն
 Ենմունչ հեծութիւն,
 Օ ի առ քո գահոյս
 Թափէ մեծայոյս,
 Սինչ սիրտն եւ միտք անմեկին
 Եւ սընարաւ հըսկէ շիրմին :

Հ. Խ. Գ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Պրիսեյի Հասարակաց Ժողովարանը :

Պեճիոյ տէրութե քաղաքները գրե-
 թէ ամենքն ալ ճոխ ու հոյակապ շէնքե-
 րով զարդարուած են, որոնց մէջ ամե-
 նէն աւելի ճոխ և մեծաշէն քաղաքն է
 Պրիսեյը, որ աս գեղեցիկ երկրիս մայրա-
 քաղաքն է, և ինչ որ մայրաքաղաքի մը
 զարդ կրնայ ըլլալ՝ իր մէջը բովանդակած
 ունի : Պրիսեյի պատմութե մէջ զար-
 մանալի յարմարութիւն մըն ալ կը նշա-
 նակեն Եօթը թուոյն վրայ : Եթեօք այս
 մայրաքաղաքս Եօթը փառաւոր պալատ
 ունէր, որոնք Եօթը երկեւրի ազնուական
 ցեղերու էին, որ տէրութեան մէջ մեծ
 ազդեցութիւն ունէին . նոյնպէս Եօթը
 մեծ հրապարակ կը գտնուին աս քաղ-
 քիս մէջ ու իրեք անգամ Եօթը աղբիւր .
 և Եօթը գլխաւոր դուռ ունի . Սէն գե-
 տին ակունքը քաղքէն Եօթը մղոն հե-
 ուր կը բղխէ . նոյնպէս Եօթը հատ են
 քաղքին գլխաւոր հոյակապ եկեղեցի-
 ները, որոնք նոյնչափ ալ ժողովրդապե-
 տութիւն կը բաժնեն զքաղաքը . և զար-
 մանալի դիպուած մ'ալ կը պատմուի,